# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 33-Ա

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

Հաստատել Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2017թ. հոկտեմբերի 30-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Դալար համայնքի ղեկավարի հաղորդումները 2017թվականի. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ուղղակի վաճառքի թույլտվություն տալու մասին:
3. <<ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին:
4. Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 28-ի թիվ 42-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
4. ՄԵԶԼՈՒՄՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34-Ն

## ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով,

*համայնքի ավագանին **որոշում է.***

Ընդունել ի գիտություն Դալար համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումները համայնքի 2017 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հետևյալ ցուցանիշներով.՝

Դալար համայնքի 2017թ.-ի 3-րդ եռամսյակի բյուջեի եկամտային մասով նախատեսված 65796,4 հազ. դրամ պլանի դիմաց փաստացի մուտքագրվել է 63789,8 հազ. դրամ, այսինքն պլանը կատարվել է 96,9 տոկոսով:

| Այդթվում ՝ (հազ.դրամ) | պլան | փաստացի | |
|---|---|---|---|
| 1. Հողի հարկ | 3945.0 | 3047.0 | 77.2 |
| 2. Գույքահարկ | 6345.0 | 5245.0 | 82.7 |
| 3. Տեղական տուրք | 219.0 | 219.0 | 100.0 |
| 4. Հողի վարձակալ. վճարներ | 680.0 | 680.0 | 100.0 |
| 5. Գույքի վարձակալ. վճարներ | 187.0 | 187.0 | 100.07 |
| 6. Ծնողական գումարներ | 750.0 | 731.4 | 97.5 |
| 7.Դոտացիա պետ. բյուջեից | 30298.0 | 30298.0 | 100.0 |
| 8. Տարենկզբիազատմնացորդ | 23372.4 | 23372.4 | 100.0 |
| Ընդամենը եկամուտներ՝ | 65796.4 | 63789.8 | 96.9 |

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
4. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Յայաստանի Յանրապետության Յողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, Յայաստանի Յանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Յայաստանի Յանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջներով՝

*համայնքի ավագանին* ***որոշում է.***

1. Խաչատուր Մեջլումյանին սեփականության իրավունքով պատկանող Դալար համայնքի Գ. Նժդեհի փողոցի թիվ 64 հասցեում գտնվող կառուցապատված հողամասին կից՝ Գ. Նժդեհի փողոցի թիվ 64/1 հասցեում գտնվող 274,5 քառ.մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը՝ ծածկագիր՝ 03-032-0035-0016 ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Խաչատուր Մեջլումյանին՝ կադաստրային արժեքով:

2. Սահմանել, որ՝

1/ հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունումից հետո, 15-օրյա ժամկետում Դալար համայնքի բյուջեի N 900415166116 հաշվին պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 71507 (յոթանասունմեկ հազար հինգ հարյուր յոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2/ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում վճարումները չկատարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

3/ Նշված հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
4. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36-Ա

### «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքում բացակայում է ջեռուցման համակարգը և մանկապարտեզի գործունեությունը շարունակելու համար չկա նանհրաժեշտ ֆինանսական միջոցներ

*համայնքի ավագանին որոշում է՝*

2017թվականի նոյեմբերի 1-ից ժամանակավորապես դադարեցնել «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
4. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37-Ն

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 42. ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով

հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 29.07.2017թ.-ի թիվ 24.12/(416449)-17 հանձնարարականը և Արարատի մարզպետ Ա. Գրիգորյանի 10.08.2017թ. թիվ N1/6/3/5079-17 գրությունը

*ավագանին որոշում է՝*

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 42 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.՝

Որոշման տեքստում «Տեղական վճարներ» բաժնում դ) կետից հետո լրացնել հետևյալ տողերը՝

<<ե) Համայնքի առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների օբյեկտների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ամսեկան 20 դրամ:

զ) Համայնքի հյուրանոցների և հյուրանոցային ծառայությունների օբյեկտների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ամսեկան 10 դրամ:

է) Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների 1քմ-ի համար ամսեկան 5 դրամ:

ը) Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների 1քմ-ի համար ամսեկան 2 դրամ»:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -6

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
4. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**